ԱՄՆ-Ի ՍԵՆԱՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԲԱՆԱՁԵՎԸ

Ինչպես արդեն հաղորդվել է, ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի կոմիտեն նոյեմբերի 17-ին ընդունել է բանաձև Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ:

Ստորև տրվում է այդ բանաձևի լրիվ տեքստը:

Նոյեմբերի 19-ին այդ բանաձևը հավանության է արժանացել Միացյալ Նահանգների սենատի կողմից:

Նպատակ ունենալով ԱՄՆ-ի պաշտպանությունը հայտնել կոնֆլիկտը խաղաղությամբ և արդարությամբ կարգավորելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ձգտմանը.

Նկատի ունենալով, որ ԱՄՆ-ի ժողովուրդը պատմական և մշակութային ամուր կապեր ունի Հայաստանի ժողովրդի հետ.

Նկատի ունենալով, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության 80 տոկոսանոց հայ մեծամասնությունը մշտապես ինքնորոշման և ազատության ձգտում է արտահայտում.

Նկատի ունենալով, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի այժմյան կարգավիճակը անհանգստություն է հարուցում և հակասությունների աղբյուր է Հայկական ու Ադրբեջանական Խորհրդային Հանրապետությունների ժողովուրդների համար.

Նկատի ունենալով, որ 1988 թվականի փետրվարի 28-29-ը Սումգայիթում՝ Ադրբեջանում հայերի սպանությունները խորհրդային կառավարությունը որակել է որպես «ջարդեր».

Նկատի ունենալով, որ Ղարաբաղի հայերի նկատմամբ շարունակվող խտրականությունը և Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի լուծման անորոշությունը հանգեցրել են զանգվածային ցույցերի ու անկարգությունների, որոնք այդ շրջանում շարունակվում են առ այսօր.

Նկատի ունենալով, որ Լեռնային Ղարաբաղում բռնություններ առաջանալու կապակցությամբ Խորհրդային Միության ժողովուրդն ու կառավարությունը սկզբում դիմեցին դրական միջոցառման՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում հատուկ կառավարման ժամանակավոր կոմիտեի ստեղծմանը՝ իրավիճակի կայունացման նպատակով.

Նկատի ունենալով, որ այդ կոմիտեն անարդյունավետ եղավ, որովհետև իր առջև դրված խնդիրների կատարմանը խոչընդոտեցին մի շարք գործոններ, ներառյալ կազմակերպված բռնությունը հայերի, հրեաների և էթնիկական այլ խմբերի նկատմամբ, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի ու Վրաստանի շրջափակումը.

Նկատի ունենալով, որ եռամսյա շրջափակումը, տարանցիկ ճանապարհով Հայաստան ուղարկվող բեռների գողությունն ու անպետքացումը վնասում են 1988 թվականի դեկտեմբերի 7-ի ողբերգական դեպքերից հետո, երբ Հայաստանում երկրաշարժ եղավ, հայերի, խորհրդային մարդկանց, ամերիկացիների և ամբողջ միջազգային հանրության կողմից վերականգնման աշխատանքների կատարմանը.

Նկատի ունենալով, որ ԱՄՆ-ի կառավարությունն ու ժողովուրդը հավատել են Հայաստանի նկատմամբ իրենց պարտավորությունները՝ միջազգային օգնություն և աջակցություն ցույց տալով երկրաշարժից տուժած շրջանների ընդհանուր վերականգնմանը.

Նկատի ունենալով, որ ԱՄՆ-ը մտադիր է այսուհետև էլ հայերին օգնել վերացնելու երկրաշարժի հետևանքները.

Նկատի ունենալով, որ ԱՄՆ-ը պաշտպանում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնական իրավունքները և Լեռնային Ղարաբաղի առթիվ ծագած կոնֆլիկտը խաղաղությամբ ու արդարությամբ կարգավորելու նրա ձգտումը:

Սույնով որոշվում է՝

ԱՄՆ-ի կոնգրեսի սենատի ու ներկայացուցիչների պալատի համատեղ որոշմանը համապատասխան, կոնգրեսը գտնում է, որ ԱՄՆ-ը պետք է՝

1. Շարունակի պաշտպանել և խրախուսել Հայաստանում վերականգնման հասնելու ջանքերը.

2. Խորհրդային պրեզիդենտ Գորբաչովին կոչ անի վերականգնել կարգուկանոնը, անհապաղ վերականգնել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի տնտեսական կառուցվածքների անարգել գործունեությունը և նրանց ժողովուրդների անարգել մատակարարումը, ապահովել Լեռնային Ղարաբաղի բնակչության ֆիզիկական անվտանգությունը հարձակումներից և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների հետ շարունակել երկխոսությունը խաղաղ կարգավորման շուրջը.

3. Խորհրդային Միության հետ երկկողմ բանավեճերի ընթացքում աջակցի Լեռնային Ղարաբաղի առթիվ ծագած կոնֆլիկտի այնպիսի արդարացի կարգավորմանը, որն իրոք արտացոլի այդ մարզի ժողովրդի հայացքները.

4. Խորհրդային Միության հետ երկկողմ բանավեճի ընթացքում կոչ անի անցկացնելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ կատարված բռնության ակտերի քննություն, ի հայտ բերելու և դատական պատասխանատվության հնթարկելու սպանությունների և արյունահեղության մեղավորներին.

5. Ամերիկյան ժողովրդի լուրջ անհանգստությունը հայտնի շարունակվող բռնության ու անկարգությունների առթիվ, որոնք խոչընդոտում են օգնության միջազգային ջանքերին: